ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» դեկտեմբեր 2016թ. № 133-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 182-Ն որոշման հավելվածի 21-րդ ու 22-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում վիճակահանության գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Արթուր Սարգսյանց	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության պետ (խմբի ղեկավար)

Յուրի Չանչուրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ՀՀ վարչապետի վերահսկողության ծառայության 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ
Դավիթ Գրիգորյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության <Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի բնակարանային ապահովման ծրագրերի բաժնի պետ
Կարեն Ղազարյան	<Միկշին> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վաճառքի բաժնի տնօրեն
Մանե Պողոսյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության <Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի բնակարանային ապահովման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ (խմբի քարտուղար)

2. Սահմանել, որ պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում հավակնորդ ծառայողների կողմից ընտրված բնակարանների վիճակահանությունը տեղի կունենա ՀՀ քաղաքաշինության նախարարությունում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 4-րդ հարկ)՝ 2016 թվականի հուլիսի 15-ին, ժամը 09.30-ին:

3. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հասմիկ Պետրոսյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայք էջում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

«13» VII 2016թ.

ք.Երևան